

Պաշտպանության խնդիրներին առնչվող իրավական ծանուցագիր՝ հաղորդակցության միջոցների՝ ներառյալ սոցիալական ցանցերի և թվային տեխնոլոգիաների չափորոշիչների վերաբերյալ

- Երեխայի և չափահասների տվյալների և անձի գաղտնիությունն ապահովելու համար Վորլդ Վիժնն արգելում է կիրառել աշխարհագրական մատնշում բոլոր այն ֆոտո և վիդեո միջոցներում, որոնք տեղադրվում են սոցիալական ցանցերում և վեբկայքերում՝ թույլ չտալով երեխայի անունը կապել երեխայի հստակ գտնվելու վայրի հետ: Ընդունելի այլընտրանքային տարբերակ կարող է լինել Վորլդ Վիժնի Չարգացման ծրագրի գրասենյակի աշխարհագրական դիրքի մատնշումը:
- Վորլդ Վիժնը մշտապես դիտարկելու և/կամ վերահսկելու է իրեն պատկանող սոցիալական ցանցերի էջերում և թվային հարթակներում տեղադրված բովանդակությունը և իրեն իրավունք է վերապահում ավելացնել, հեռացնել/ջնջել կամ խմբագրել ցանկացած մեկնաբանություն, որը համարում է անհարիր:

Հետևյալ բովանդակությամբ, և ոչ միայն, մեկնաբանությունները կարող ենք ջնջվել կամ խմբագրվել էջի մոդերատորների կողմից.

1. Մեկնաբանություններ, որոնք խախտում են Վորլդ Վիժնի՝ Պաշտպանության վարվելակերպի կանոնները,
 2. Մեկնաբանություններ, որոնց բովանդակության մեջ երեխաները կամ չափահաս շահառուները ներկայացվում են որպես շահագործվողներ, կամ որտեղ երեխաների կամ չափահաս շահառուների արժանապատվությունը ոտնահարվում է,
 3. Վիրավորական, հայհոյանք պարունակող մեկնաբանություններ:
 4. Թեմայի հետ չառնչվող կամ անտեղի մեկնաբանություններ,
 5. Մեկնաբանություններ, որոնք պարունակում են չարախոսություններ կամ արտահայտում են ատելություն,
 6. Անձնական վիրավորանք կամ զրպարտություն,
 7. Մեկնաբանություններ, որոնք բացահայտում ենք հովանավորի, դոնորի, հովանավորվող երեխայի և նրա ընտանիքի տվյալների գաղտնիությունը,
 8. Մեկնաբանություններ, որոնք պարունակում են երեխայի ազգանունը, անձնագրային տվյալներ և/կամ երեխայի գտնվելու վայրը, հասցեն:
- Վորլդ Վիժնի կողմից վարվող սոցիալական ցանցերի էջերում, այդ թվում նաև բլոգերում, Ֆեյսբուքում, Թվիթերում, Յություբի էջում տեղ գտած կարծիքներն ու տեսակետները պատկանում են առանձին բլոգերների և առցանց համայնքի

ներկայացուցիչներին և, պարտադիր չէ, որ դրանք համընկնեն Վորլդ Վիժն Հայաստանի և/կամ կազմակերպության որևէ մասնաճյուղի, ինչպես նաև կազմակերպության տնօրենի, պատասխանատուների, աշխատակազմի, աշխատակիցների, խորհրդի անդամներից որևէ մեկի տեսակետների և կարծիքի հետ: Այս էջերում տեղադրված կարծիքներն ու տեսակետները որևէ կերպ չեն արտացոլում սովյալ կայքի տեսակետները, կամ այլ կայքերի, որոնք առնչվում են այդ կայքի հետ, ինչպես նաև այն աշխատակիցների տեսակետների հետ, որոնք վարում են սովյալ կայքը և այդ կայքին հետևող այլ անձանց տեսակետների հետ:

- Սոցիալական ցանցերում բովանդակություն տեղադրելիս կամ տարածելիս Վորլդ Վիժնի աշխատակիցները պարտավոր են հետևել կազմակերպության Պաշտպանության քաղաքականությանը: Վորլդ Վիժն իր աշխատակիցներին խրախուսում է պատասխանատու կերպով օգտագործել սոցիալական ցանցերը. այս մոտեցումը կարգավորվում է «Վորլդ Վիժնի Ընկերակցության Համաշխարհային սոցիալական ցանցերի քաղաքականություն» փաստաթղթով:
- Վորլդ Վիժն Հայաստանի՝ սոցիալական ցանցերի էջերում բովանդակություն տեղադրելով, դուք հասկանում և ընդունում եք, որ այդ բովանդակությունը հասանելի է հանրությանը: Խնդրում ենք՝ հաշվի առնել, որ էջերին հետևող այլ օգտատերեր կարող են օգտագործել Ձեր կողմից տեղադրված բովանդակությունը. ինչը դուրս է Վորլդ Վիժն Հայաստանի վերահսկողությունից: Եթե չեք ցանկանում, որ Ձեր կողմից տեղադրված բովանդակությունը հասանելի լինի այլոց համար, ապա պարզապես մի տեղադրեք այն: Վորլդ Վիժն Հայաստանը չի կրում պատասխանատվություն սոցիալական ցանցերի այլ օգտատերերի կողմից տեղադրված անհարիր բովանդակության համար:

Եթե հանդիպեք վերը նշված չափորոշիչների խախտման դեպքեր Վորլդ Վիժն Հայաստանի սոցիալական ցանցերի էջերում, խնդրում ենք, դրա մասին գրեք մեզ wvarmenia@wvi.org էլ. հասցեով:

Հայաստանի Հանրապետություն տարածքում երեխաների և չափահասների հանդեպ կիրառվող առցանց բռնության և/կամ երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող ցանկացած միջադեպի մասին կարելի է հաղորդել հետևյալ ճանապարհներով՝

- Հաղորդելով սոցիալական աջակցության տարածքային մարմիններին: Երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող դեպքերի վերաբերյալ հաղորդման համար գործում է ԹԵՏ գիծ՝ 114:
- Հաղորդելով ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի գրասենյակ երեխաների կամ չափահասների իրավունքների

պաշտպանության հարցերով: Դեպքերի վերաբերյալ կարող եք հայտնել Թեժ գծի միջոցով՝ 116 կամ գրել էլ. նամակ <http://www.ombuds.am> կայքի միջոցով:

- ՀՀ Ոստիկանություն՝ 102:
- Հաղորդելով Երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող Թեժ գծի և արձագանքման հեռախոսային ծառայություն. սա խնամքի և պաշտպանության կարիք ունեցող երեխաների համար ստեղծված, հրատապ աջակցություն տրամադրող ծառայություն է: Այն գործում է շաբաթվա բոլոր օրերին՝ շուրջօրյա: Հեռախոսագանգերին պատասխանում են որակավորված մասնագետներ: Ջանգահարել կարող եք 0800 61 111 կամ 241580 հեռախոսահամարներով:
- Երեխաների կամ չափահասների սեռական շահագործման դեպքերով կարող եք դիմել «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» կամ զանգահարել 080001280 թեժ գծին: